ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՆԻԿՈԼՈ ՄԱՔԻԱՎԵԼԻ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Ռ.Հ.ՎԱՆԵՍՅԱՆ

Սկսած XVI դ. սկզբներից՝ բացարձակ միապետությունն արդեն հաստատվել և կառավարման գերակշռող ձև էր դարձել Արևմտյան Եվրոպայի երկրներում, որին նախորդել էր ազգային պետությունների միավորման, ամրապնդման ու կենտրոնացման գործընթացը:

Եվրոպական երկու խոշոր պետություններ՝ Գերմանիան և Իտալիան, որոնց բնորոշ էին մշտական ֆեոդալական երկպառակությունները, հետ էին մնում այդ գործընթացից: Իտալիան, որն այդ ժամանակաշրջանի հարուստ ու կուլտուրական երկրներից էր, շարունակում էր մնալ որպես առավել մասնատված երկիր (նկատենք, որ այդ ժամանակաշրջանի Իտալիան բաժանված էր հինգ խոշոր նահանգների): Իսկ գործող քաղաքական համակարգն ինչ-որ ձևով հիշեցնում էր անտիկ Հունաստանն իր պոլիսներով, որոնցում առկա էին անվերջ կոնֆլիկտները: Բայց, ի տարբերություն Հունաստանի, Իտալիայում դրանց ակտիվորեն միջամտում էին հարևանները:

Եվրոպական երկրների տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններն իրենց արտահայտությունն էին ստանում ձևավորվող քաղաքական տեսություններում: Եվ այդ ամենը կարծես թե միագումարվում, ամբողջացվում էր բարդ ու միաժամանակ հակասական անձնավորության՝ Նիկոլո Մաքիավելու (1469 - 1527թթ.) հայացքներում: Նրա ժամանակակիցներից ոչ մեկն այնքան պարզ չէր տեսնում, թե քաղաքական ինչ զարգացում է ապրում Եվրոպան: Ոչ ոք նրանից ավելի լավ չէր գիտակցում, թե ինչ ուժեր են գլխավոր դեր խաղում այդ գործընթացում: Ոչ ոք նրանից ավելի լավ չէր տեսնում, թե նշված գործընթացների համար ինչ վտանգ է ներկայացնում բարոյական ու քաղաքական կոռուպցիան: Ոչ ոք, անկասկած, նրանից ավելի լավ չգիտեր այդ ժամանակաշրջանի Իտալիայի կացությունը, նրանում տիրող քաղաքական ու բարոյական մթնոլորտը:

Նրա նախնիները, թե՛ հոր և թե՛ մոր գծով, նշանակալից հետք են թողել Ֆլորենցիայի պատմության մեջ, հաճախակի բարձր պաշտոններ զբաղեցրել այդ հանրապետությունում: Մաքիավելին նույնպես իր ուժերի կիրառման բնագավառ է ընտրում պետական ծառայության ոլորտը: Շուրջ 14 տարի նա անընդմեջ զբաղեցրել է Տասի խորհրդի քարտուղարի պաշտոնը, ղեկավարել ազատության ու խաղաղության հանձնաժողովը: Նրա տնօրինության տակ էին ոչ միայն հանրապետության ներքին հարցերը և ռազմական գործերը, այլև գրագրությունները՝ արտասահմանում գտնվող Ֆլորենցիայի ներկայացուցիչների հետ: Նա դիվանագիտական հանձնարարություններ էր կատարում Ֆրանսիայի թագավորի և Գերմանիայի կայսեր արքունիքներում, Հռոմի պապի մոտ և այլն: Հայտնի հեղաշրջումից (1512թ.) հետո, որը իշխանությունը նորից վերադարձնում է Մեդիչիների ընտանիքին, Մաքիավելուն կասկածում են հակապետական խռովությանը մասնակցելու մեջ և աքսորում իր կալվածքը: Ահա այսպիսի

պայմաններում են ձևավորվում նրա քաղաքական հայացքները: Կարծում ենք, միանգամայն բնական է, որ Մաքիավելի մտածողի համար գլխավորը դառնում է քաղաքական գործունեության տեսական հիմքերի մշակումը:

Մաքիավելու քաղաքագիտական բնույթի առավել կարևոր աշխատություններն են «Իշխանը» և «Խորհրդածությունները»[1]: Դրանցում յուսաբանվում են պետության զարգացման ու անկման պատճառները: «Իշխան»-ում ավելի շատ նկարագրվում է բացարձակ միապետությունը, իսկ մյուսում՝ Հռոմեական հանրապետության զարգացման գործընթացը:

Քաղաքականությունը դարձնելով իր հետաքրքրությունների հիմնական օբյեկտը՝ Մաքիավելին, ի տարբերություն նախորդ մտածողների, այն որոշակիորեն անջատում է կրոնական, բարոյական ու սոցիալական գործոններից՝ քաղաքականության նպատակը համարելով քաղաքական իշխանության պահպանումն ու ընդլայնումը: Անդրադառնալով «պետություն» ինստիտուտին՝ Մաքիավելին այն համարում է մարդու ոգու բարձրագույն դրսևորումը, իսկ պետությանը ծառայելը՝ մարդկային կյանքի նպատակը: Բազմաթիվ ավանդական հասկացությունների՝ «թագավորություն», «կայսրություն», «միապետություն», «հանրապետություն» և այլն, քաջ ծանոթ լինելով հանդերձ, նա շրջանառության մեջ է դնում ,"Stato" հատուկ տերմինը՝ խոշոր կենտրոնացված պետությունները անվանելու համար: Նշված տերմինը ավելի լայն և ընդգրկուն է, քան պոլիսը և հնարավորություն է տալիս այն տարբերելու երկրից, հասարակությունից, իշխանության ինստիտուտներից և այլն: Կարծում ենք՝ պատահական չէ, որ նրա քաղաքական իդեալը Հին Հռոմն էր, որում նա տեսնում էր ուժեղ պետության մարմնավորումը: Հանրապետական Հռոմը նա համարում էր քաղաքական կառուցվածքի տիպար և իր հիացմունքն արտահայտում հին հռոմեացիների քաղաքացիական առաքինության հանդեպ ու հավատում, որ դա բխում է ընտանեկան հարաբերությունների մաքրությունից, անկախությունից, քաղաքացիական պարտքի նվիրվածությունից ու հավատարմությունից:

«Խորհրդածություններ»-ում նա նկարագրում է հին հռոմեական պետական կարգը և արտահայտում այն միտքը, թե հանրապետությունը կառավարման լավագույն ձևն է, քանզի յուրաքանչյուրին պատասխանատու է դարձնում պետության ճակատագրի համար՝ հիշեցնելով, թե կառավարման այդ ձևը հնարավոր չէ բոլոր ժամանակներում և պայմաններում: Այսպես, նրա կարծիքով, հնարավոր չէ պահպանել ազատ քաղաքական հաստատությունները, եթե ժողովրդի մեջ զարգացած չեն քաղաքացիական առաքինությունները: Այս առումով էլ Մաքիավելին ընդգծում է այն միտքը, թե Հռոմեական հանրապետությունը հզորության է հասել նաև այն պատճառով, որ կարողացել է ժողովրդի մեջ ղաստիարակել քաղաքացիական բարձր ոգի: Բնականաբար, կարող է հարց ծագել, թե ո՞րն է այդ հիշեցումների նպատակը: Մաքիավելին այդ քայլին է դիմում Հին Հռոմի հզորությունը, մեծությունը իր ժամանակաշրջանի անկում ապրած Իտալիային հակադրելու համար: Բնական է, որ «Իշխանը» աշխատությունում նա առաջ է քաշում ու հիմնավորում ազգային ուժեղ պետության ստեղծման ձևերն ու միջոցներն այնպիսի պայմաններում, երբ ժողովրդի մեջ զարգացած չէ քաղաքացիական առաքինությունը:

---

[1] Н. Макиавелли, Государь, М., 1990, նույնի՝ Рассуждения (Избранные сочинения, М., 1982).

Արդեն ակնարկել ենք, որ Մաքիավելին քաղաքականությունն ըմբռնում է որպես իշխելու հարաբերությունների, որոշումների ընդունման ու գործողությունների այնպիսի բնագավառ, որն ունի իր հատուկ տրամաբանությունը և տարբերվում է հասարակական կյանքի մյուս բնագավառներում մարդու գործողությունների տրամաբանությունից: Քաղաքականությունն այնպիսի հարաբերությունների ու գործողությունների ոլորտ է, որին բնորոշ է շահերի բարդ փոխազդեցությունը: Իսկ հիմնական շահը, նրա կարծիքով, իշխանության նվաճումն ու պահպանումն է, որին հասնելու գլխավոր միջոցը բռնությունն է:

Վերոհիշյալ մոտեցումներն ու հարցադրումներն ըմբռնելու և գնահատելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է առաջին հերթին դիմել նրա «Իշխանը» աշխատությունը: Այն շուրջ 500 տարուց ավելի տարբեր երկրների բազմաթիվ քաղաքական գործիչների սեղանի գիրքն է և մինչ այսօր չի կորցրել իր արդիականությունը, խորությունն ու յուրօրինակությունը: Այդ աշխատությունում, որն սկսվում է պետական իշխանության տարբեր տեսակների դասակարգումով, Մաքիավելին տարբերակում է պետության կառավարման երկու հիմնական ձև՝ պնդելով, թե բոլոր տերությունները, որոնք իշխել և իշխում են մարդկանց, իրենց էությամբ եղել են կամ հանրապետություններ, կամ միապետություններ, որոնք կառավարվել են միանձնյա[2]: Այնուհետև, նա զգուշացնում է. «Այս դեպքում ես չեմ քննարկում հանրապետությունները, քանի որ դրանց մասին հանգամանորեն խոսում եմ ուրիշ տեղ (նկատի ունի «Խորհրդածությունները» – Ռ.Վ.), ես դիմում եմ միանձնյա կառավարողներին... և պետք է քննարկեմ, թե ինչպես կարելի է կառավարել և պահպանել իշխանությունը»[3]: Այս դիրքորոշումը հնարավորություն է տալիս առանձնացնելու իշխանությունը՝ որպես առանձնահատուկ բնագավառ, որը իմաստուն իշխանից պահանջում է վարվելաձևի որոշակի արվեստ, այսինքն՝ որոշակի կանոններին հետևելու և խաղաղ ժամանակներում երբեք պարապության ու անբանության չտրվելը[4]:

«Իշխանություն» հասկացության՝ որպես քննության հատուկ օբյեկտի առանձնացմանը, նպաստում է նրա՝ ազատ կամքի կանխադրույթի առաջադրումը:

Մաքիավելին բավական խիստ է հանդես գալիս այդ ժամանակաշրջանում լայն տարածված այն տեսակետի դեմ, որի համաձայն, քաղաքական ճակատագիրը հիմնականում կախված է «պատահականություններից», բախտից, այլ ոչ թե քաղաքական գործչի անձնական կամքի ու խելքի համակենտրոնացումից: Այս չափազանց կարևոր հիմնահարցին, հատկապես տվյալ ժամանակաշրջանի Իտալիայի համար, նա անդրադառնում է երկու անգամ: Այսպես, աշխատության VI գլխում հստակորեն նշում է, որ եթե մարդուն իշխանության են բերել կամ խիզախությունը, կամ ճակատագիրը, ապա կարող է թվալ, որ դրանք հավասար չափով մարդուն կօգնեն հետագայում ևս հաղթահարել մի շարք դժվարություններ, մինչդեռ իրականում այդպես չէ, քանի որ իշխանության գլուխ առավել երկար մնացել է նա, ով ավելի քիչ է հույսը դրել ճակատագրի ողորմածության վրա[5]: Այնուհետև այդ հարցին նա անդրադառնում է աշխատության XXV գլխում, որը

[2] Н.Макиавелли, Государь, с. 4.

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 16 – 17:

[5] Նույն տեղում:

վերնագրված է. «Ի՞նչ է նշանակում ճակատագիրը մարդկային գործերում, և ինչպես կարելի է դրան դիմակայել»: «Ես գիտեմ, - գրում է նա, - թե ինչքան հաճախ անցյալում, այնպես էլ այժմ պնդում են, որ աշխարհում ամեն ինչ տնօրինում են ճակատագիրը և Աստված, իսկ մարդիկ իրենց ըմբռնմամբ ոչինչ չեն որոշում և անգամ ոչ մի բանի չեն կարող դիմակայել. այստեղից էլ եզրակացնում են, թե իմաստ չունի քեզ ծանրաբեռնել հոգսերով, այլ ավելի լավ է հաշտվել ոսխական բախտի հետ»[6]: Մաքիավելին համաձայն չէ այս հարցադրմանը: Նա կարծում է, որ ճակատագիրը տնօրինում է մարդկային բոլոր գործողությունների կեսը, իսկ մյուս կեսը կամ մոտավորապես այդքանը հանձնում է մարդկանց: Դեռ ավելին, Մաքիավելին մեղադրում է իր ժամանակվա Իտալիայի իշխաններին հենց այն բանի համար, որ իշխելով շատ տարիներ՝ զրկվել են իրենց պետություններից, և դրա մեղավորը ոչ թե ճակատագիրն է, այլ իրենց անփութությունն ու անտարբերությունը: Այս իմաստով Մաքիավելին ճակատագիրը նմանեցնում է փոթորկոտ գետի, որը սաստիկ ալեկոծվելով ջրասույզ է անում ափերը, տապալում ծառերը, խորտակում կայանները... և բոլորը նրանից հեռու են փախչում: Սակայն հարց է առաջանում՝ մի՞թե դա խանգարում էր մարդկանց հանգիստ ժամանակներում ձեռնարկել նախազգուշական միջոցներ, ստեղծել պաշտպանական կառույցներ[7]: Այդպես է նաև ճակատագիրը, որն իր ամենազորությունը ցուցադրում է այնտեղ, որտեղ նրա դեմ քաջությունը չի ծառայում որպես արգելք, խոչընդոտ, ու չի հանդիպում կառուցված ամուր արգելափակոցների: Ուստի, եթե իշխանն անվերապահ ապավինում է ճակատագրին, ապա չի կարող դիմակայել դրա հարվածներին: Մաքիավելու կարծիքով, հաջողություն ունենում են նրանք, որոնց գործողությունների տիպը, բնույթը համապատասխանում է ժամանակի յուրահատկություններին, իսկ անհաջողակ են նրանք, որոնց գործողությունները չեն համապատասխանում իրենց ժամանակին[8]: Այս հարցերի վերլուծությունից հետո Մաքիավելին հանգում է հետևյալ եզրակացության. «Ճակատագիրը կայուն չէ, իսկ մարդը համառություն է դրսևորում իր գործողություններում, հետևապես, քանի դեռ նրանց միջև կա համաձայնություն, մարդը գտնվում է հաջողության մեջ, իսկ երբ վրա է հասնում անհամաձայնությունը, նրա հաջողությունը վերանում է»[9]: Կարծում ենք՝ Մաքիավելու առաջ քաշած մտքերը և հարցադրումներն ուսանելի են նաև մեր ժամանակի շատ քաղաքական գործիչների համար:

Այս գլխում Մաքիավելին օգտագործում է նաև «կամքի ազատություն» հասկացությունը՝ այն կապելով ապագայի նկատմամբ պատասխանատվության հետ, դրանով իսկ քաղաքականությանը տալով պատմական հեռանկարային բնույթ, մտածելով, թե քաղաքականությամբ զբաղվելը պատմության ստեղծագործական գործընթաց է: Այստեղ նա կատարում է արժեքավոր ընդհանրացում, այն է՝ շահերի նախագծումը, դրանց պայքարը և քաղաքական կամքի վեկտորների հերթափոխումը, կախված իրադրությունից, քաղաքականությունը դարձնում են քաղաքական վարքագծի արվեստ՝ ղեկավարվելով օրենքի իմացությամբ և կողմնորոշվելով դեպի իշխանության նվաճումը, ընդլայնումը, պահպանումն ու ամրապնդումը, որը նպատակ ունի

[6] Նույն տեղում, էջ 73 - 74:
[7] Նույն տեղում, էջ 74:
[8] Նույն տեղում, էջ 74 - 75:
[9] Նույն տեղում, էջ 76:

պատմական գերխնդրի՝ Իտալիայի քաղաքական միավորման հիմնահարցի լուծմանը, նրա ազատագրմանը «բարբարոսներից»: Այս դիրքորոշումներում որոշակիորեն նկատելի է, մի կողմից՝ գործողությունների ազատության գործառական «աստիճան»՝ քաղաքական նպատակներին հասնելու շրջանակներում, իսկ մյուս կողմից՝ սահմանվում են այդ ազատության պատասխանատվության առավելագույն հորիզոնները:

Անդրադառնալով առաջինին՝ ասենք, որ դրա խտացված արտահայտությունը կարող է լինել «նպատակը արդարացնում է միջոցները» բանաձևը: Սակայն կարևոր է նաև նկատել, որ բառիս ճշգրիտ իմաստով Մաքիավելու աշխատության մեջ այդ բանաձևը գոյություն չունի: Միայն XVIII գլխում կարդում ենք. «...բոլոր մարդկանց և հատկապես իշխանի գործերի մասին, որոնց համար չի կարելի դատ պահանջել, դատում են ըստ հաջողության, այդ պատճառով էլ իշխանը թող հոգ տանի հաղթանակի և պետության պահպանման մասին... միջոցները միշտ էլ համարվելու են արժանի և բոլորի կողմից արժանանալու են հավանության (ընդգծումը մերն է – Ռ.Վ.), քանի որ ամբոխը գնում է գործի հաջողության և տեսանելիության հետևից... աշխարհում չկա ոչինչ, բացի ամբոխից, և նրանում փոքրամասնությանը տեղ չի մնում, երբ մեծամասնության հետևում կանգնած է պետությունը»[10]:

Ըստ էության, խոսքը վերաբերում է միապետի իշխանության հեղինակության հիմնավորումներին, այն բանին, որ իշխանը կարող է կիրառել ցանկացած միջոց՝ հանուն իշխանության պահպանման և քաղաքական հակառակորդների նկատմամբ հաղթանակ տանելու, եթե այդ միջոցներն արդյունավետ են: «Նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքի նման ըմբռնման գործում, կարծում ենք՝ Մաքիավելին այնքան մեղք չունի, որքան վերագրում են նրան: Նրա կարծիքով, նպատակը, որն արդարացնում է միջոցները, «ընդհանուր գործ է», ուժեղ ազգային պետություն, Հայրենիքի շահեր: Միայն հանուն դրա քաղաքական գործիչը պետք է կարողանա բռնել չարի ճանապարհը, կարողանա լինել անբարյացակամ, չարակամ, բայց դրա հետ միասին չչեղվի բարի լինելուց, եթե դա հնարավոր է:

Խոսվում է նաև քաղաքական գործունեության չափի մասին, իսկ ազատությունը և արդյունքը գործառութորեն կապված են իրար հետ, և ինչքան անվիճելի ու համոզիչ են արդյունքները, այնքան ավելի մեծ է ազատությունը: Նկատենք, որ նա բռնությանը նույնպես մոտենում է գործառնական իմաստով, չնայած բռնությունը, մասնավորապես կանխարգելիչ պատժամիջոցը, համարում է առավել արդյունավետ միջոց: Իշխանը չպետք է վախենա, որ իրեն կարող են անողոքորեն վատաբանել, եթե անհրաժեշտ է հպատակներին պահել միասնության ու հավատարմության մեջ: Գործելով մի քանի բռնություններ՝ նա կդրսևորի ավելի շատ գթասրտություն, քան նրանք, ովքեր դրա առատությամբ խրախուսում են անկարգություններ: Թալան ու սպանություններ ծնող անկարգություններից տուժում է ամբողջ բնակչությունը, մինչդեռ պատժից, որը կիրառում է պետությունը, տառապում են միայն առանձին մարդիկ[11]: Տրամաբանական է, որ աշխատության XVIII գլխում Մաքիավելին իշխանին խորհուրդ է տալիս, թե ինչ եղանակներով պետք է պայքարել թշնամու դեմ՝ ընդգծելով, որ կարելի է պայքարել

[10] Նույն տեղում, էջ 54:
[11] Նույն տեղում, էջ 49:

երկու եղանակով, առաջին՝ օրենքներով, երկրորդ՝ ուժով: Առաջինը բնորոշ է մարդուն, երկրորդը՝ գազանին: Բայց քանի որ առաջինը հաճախ անբավարար է, ապա անհրաժեշտություն է դառնում դիմելու նաև երկրորդին: Այստեղից էլ հետևում է, որ իշխանը պետք է յուրացնի այն, ինչը դրված է մարդու և գազանի բնույթի մեջ[12]: Մաքիավելին, որոշակիորեն նշում է, որ իբրև օրինակ պետք է վերցնել առյուծին և աղվեսին: «Առյուծը, - ասում է նա, - վախենում է թակարդներից, իսկ աղվեսը՝ գայլերից, հետևապես պետք է նմանվել աղվեսին՝ թակարդները շրջանցելու և առյուծին՝ գայլերին վախեցնելու համար»[13]: Մեծ մտածողն ուժի ու խորամանկության զուգակցումը համարում է քաղաքագետի կամ, ավելի շուտ, քաղաքական գործչի կարևոր հատկություններից: Նա տարբեր տիպերով իշխանին խորհուրդ է տալիս չլինել չափազանց գթասիրտ կամ դաժան, դյուրչ լինել իր գործողություններում և մարդկանց ապավինելիս:

Մաքիավելին քննել է նաև նպատակի և դրան հասնելու միջոցների հարաբերակցության հարցը: Նա բավական ավանդական ձևով է մտածում իշխանի բարոյահոգերանական, դրական ու բացասական հատկանիշների, նրա առաքինությունների ու արատների մասին, որը երևում է անգամ աշխատության տարբեր բաժինների անվանումներից: Օրինակ, «Այն մասին, թե ինչի համար մարդկանց, հատկապես թագավորներին, գովաբանում կամ կշտամբում են»(գլուխ XV), «Շռայլության և խնայողության մասին» (գլուխ XVI), «Դաժանության և գթասրտության և այն մասին, թե ի՞նչն է լավ, ներշնչել սե՞ր, թե՞ վախ» (գլուխ XVII), «Այն մասին, թե ինչպես խուսափել ատելությունից և արհամարհանքից» (գլուխ XVIII), «Ինչպես է վայել թագավորին վարվել, որպեսզի իրեն պաշտեն» (գլուխ XIX) և այլն: Այսպիսով, միայն վերնագրերին ծանոթանալիս անգամ, հնարավոր չէ չնկատել, որ խոսվում է այլընտրանքային ֆունկցիոնալ վարքագծի մոդելի մասին, որը ռեֆլեքսային ձևով կողմնորոշվում է դեպի փոփոխվող հանգամանքները: Այսպես, XX գլխում հիմնականում մեկնաբանություններ են ամրոցների օգտակարությունների մասին, բայց դարձյալ քննարկվում է իշխանի վարքագիծը՝ կապված իրադրության, դրա կացության հետ: Մաքիավելին համոզմունք է հայտնում, թե իշխանները, անկասկած, դառնում են մեծ մարդիկ, երբ հաղթահարում են դժվարությունները և իրենց ցույց տրված դիմադրությունը, այդ իսկ պատճառով էլ հակատագիրը, հատկապես, երբ ցանկանում է մեծարել, փառաբանել նոր իշխանին, նրա դեմ է ուղարկում թշնամիների և ստիպում, որպեսզի հաղթելով նրանց, վեր բարձրանա աստիճաններով, ինչքան հնարավոր է[14]:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Մաքիավելու այն միտքը, որ շատերը ենթադրում են, թե իմաստուն իշխանն ինքը նույնպես պարտավոր է, եթե հանգամանքները թույլ են տալիս, արհեստականորեն իր համար ստեղծել թշնամիներ, որպեսզի նրանց նկատմամբ հաղթանակ տանելով՝ ավելի շատ բարձրացնի իր փառքը[15]: Այս կապակցությամբ նշենք, որ ամբողջատիրական քաղաքական վարչակարգի հիմնադիր հայրերը քաջատեղյակ են եղել այս մտքերին և գործնականում հաճախ են կիրառել:

Աշխատության XVII գլխում Մաքիավելին քննում է կարևոր գործնական

[12] Նույն տեղում, էջ 52:
[13] Նույն տեղում:
[14] Նույն տեղում, էջ 64:
[15] Նույն տեղում:

նշանակության հարց՝ ի՞նչն է լավ, իշխանին սիրե՞լը, թե՞ նրանից վախենալը: Ըստ Մաքիավելու, «ավելի լավ է, երբ միաժամանակ և՛ վախենում են, և՛ սիրում»[16]: Բայց քանի որ սերը վատ է հարմարվում, հաշտվում վախի հետ, այդ պատճառով էլ՝ եթե հարկ է ընտրել, ասա նախընտրելի է վախը: Բայց ինչո՞ւ: Մաքիավելին հետևյալ կերպ է հիմնավորում այդ տեսակետը: Մարդիկ անշնորհակալ են, փոփոխական, կեղծավոր, երկչոտ՝ վտանգի առաջ, հակված հարստանալու, հետևապես, քանի դեռ նրանց համար լավ բան ես անում, նրանք ամբողջ հոգով քոնն են, խոստանում են քեզ համար ոչինչ չխնայել, ոչ կյանքը, ոչ ունեցվածքը, ոչ երեխաներին, բայց հենց որ դու ես զգում նրանց կարիքը, անմիջապես քեզանից երես են դարձնում[17]: Այս դեպքում էլ Մաքիավելին զգուշացնում է, թե վատն է սպասվում այն իշխանին, որը վստահելով մարդկանց խոստումներին, ոչ մի միջոց չի կիրառում վտանգի դեպքում: Բայց ոչ մեծահոգությամբ ու ազնվությամբ ձեռք բերված բարեկամությունը չի կարելի երկար պահպանել, որպեսզի այն պետք գա դժվար ժամանակներում: Եվ Մաքիավելին խորհուրդ է տալիս իշխանին վախը այնպես ներշնչել, որպեսզի եթե նա ձեռք չբերի սեր, գոնե խուսափի ատելությունից, որքանով որ հնարավոր է ներշնչել վախ՝ առանց ատելության: Ատելությունից խուսափելու համար իշխանը պիտի ձեռնպահ մնա քաղաքացիների ու հպատակների ունեցվածքի ու կանանց նկատմամբ ոտնձգություն կատարելուց: Անգամ այն դեպքում, երբ իշխանն անհրաժեշտ է համարում որևէ մեկին զրկել կյանքից, նա կարող է դա կատարել, եթե ակնհայտորեն պատճառներն առկա են: Բայց իշխանը դարձյալ պետք է զգուշանա ուրիշի ունեցվածքի նկատմամբ ոտնձգությունից, քանի որ մարդիկ ավելի շուտ կմոռանան հոր մահը, քան ունեցվածքի կորուստը[18]:

Նշանավոր քաղաքագետի տեսադաշտից դուրս չի մնացել նաև խորհրդականների, օգնականների դերի ու նշանակության հիմնահարցը: Քաջ հայտնի է, որ մեր օրերում էլ այդ ինստիտուտը շատ կարևոր դեր է խաղում որևէ երկրի քաղաքական կյանքում: Մաքիավելին նշված ինստիտուտի անհրաժեշտությունը կարևորում է այսպես. նախ, թագավորների համար շատ կարևոր է խորհրդականներ ընտրելը: Իսկ թե ինչպիսին կլինեն նրանք՝ լավ, թե վատ, կախված է թագավորների խելքից, շրջահայացությունից: Եվ նա որոշակիորեն նշում է, որ կառավարողի խելքի մասին առաջին հերթին դատում են նրանով, թե ինչպիսի մարդկանցով է նա իրեն շրջապատել: Եթե նրանք նվիրված և ընդունակ մարդիկ են, ապա միշտ համոզված պետք է լինել թագավորի իմաստության մեջ, որովհետև նա կարողացել է ճանաչել, իմանալ նրանց ընդունակությունները և պահել նրանց հավատարմությունը: Իսկ եթե նրանք այդպիսին չեն, ապա համապատասխան կերպով մտածում են թագավորի մասին, որովհետև նա առաջին սխալն արդեն կատարել է՝ ընտրելով վատ օգնականներ[19]: Արժե նշել, որ Մաքիավելու կարծիքով, «խելքերը» լինում են երեք տեսակ: Մեկը ինքն է հասնում ամեն ինչի: Երկրորդը կարող է հասկանալ այն, ինչին հասել է առաջինը: Երրորդն ինքը ոչնչի չի հասնում և ուրիշների ձեռք բերածն էլ չի կարողանում հասկանալ: Առաջին խելքը ականավոր է, երկրորդը՝ նշանակալից,

[16] Նույն տեղում, էջ 50:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում:
[19] Նույն տեղում, էջ 69:

երրորդը՝ ոչ պիտանի[20]: Նկատի ունենալով այս՝ Մաքիավելին աշխատում է համոզել, որ եթե մարդն ընդունակ է ճանաչել լավն ու վատը, ապա ինքը, չլինելով հնարամիտ, կարող է իր օգնականների խորհուրդներում տարբերել վատը լավից, լավի համար վարձահատույց լինել, իսկ վատը չխրախուսել կամ վատի համար պատժել: Այս դեպքում օգնականները հրաժարվում են թագավորին խաբելու մտքից և բարեխղճորեն ծառայում են նրան[21]:

Իր համոզմունքներով լինելով հանրապետական՝ Մաքիավելին բավական օբյեկտիվորեն է գնահատում իր ժամանակաշրջանի Իտալիայի պայմանները, իրադրությունը և հանդես գալիս հզոր ուժեղ, միապետական իշխանության: Ուշադրությամբ հետևելով իր երկրի քաղաքական կյանքին՝ նա տեսնում էր, որ հանրապետության ժամանակը դեռ չի հասել: Հետևապես, սկզբում անհրաժեշտ է միավորել Իտալիան: Իսկ այդ բարդ և չափազանց կարևոր խնդիրը կարող է լուծել միայն ուժեղ միապետական իշխանությունը՝ հետագայում իր տեղը զիջելով հանրապետությանը:

Ամփոփելով հիշեցնենք, որ Մաքիավելուն դրդողը և ոգևորողը իր հայրենասիրությունն էր, երազանքն ու ձգտումը Իտալիան տեսնել միավորված ու հզոր, որի համար էլ ազդու միջոցներ էր փնտրում առանց խտրության:

Н.МАКИАВЕЛЛИ-ВЫДАЮЩИЙСЯ ПРЕДСТАВИТЕЛЬ ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ

Р.А.ВАНЕСЯН

Резюме

Никколо Макиавелли является выдающимся представителем политической мысли эпохи Возрождения. После отстранения от активной политической практики он занялся наукой, сделав изучение теоретических принципов политической деятельности предметом специального научного анализа. Макиавелли оставил большое теоретическое наследие, в котором особое место занимает труд “Государь”. В нем обосновывается необходимость создания сильного национального государства, что было особенно актуально для Италии того времени.

[20] Նույն տեղում, էջ 70:
[21] Նույն տեղում: